

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 14/3

14 ապրիլի 2015 թ.

Քննարկվեց «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ գանգատը ՀՀ ՖՆ Միջազգային Ճանապարհային Փոխադրումների տարածաշրջանային մաքսատան պետի 20.03.2015 թ-ի թիվ 11 որոշման դեմ:

«Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ Միջազգային ճանապարհային փոխադրումների տարածաշրջանային մաքսատան պետի կողմից 20.03.2015 թ-ին «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի տնօրենը ենթարկվել է 50.000 դրամի վարչական տուգանքի ՀՀ մաքսային օրենսգրքի 194-րդ հոդվածի հիմքով: Ըստ որոշման 01.04.2008 թ-ին թիվ C 2197 ԲՄՀ-ով «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի անվամբ ժամանակավոր ներմուծում մաքսային ընթացակարգով հայտարարագրված և 10.10.2012 թ-ի թիվ 0000624 արձանագրությամբ պատասխանատու պահպանության տրված ապրանքների համար սահմանված ժամկետում հայտարարագիր չներկայացնելու համար:

Համաձայն մաքսային օրենսգրքի 194-րդ հոդվածի՝ Սահմանված ժամկետում մաքսային մարմիններին ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ մաքսային հայտարարագիր չներկայացնելը, ինչպես նաև մաքսային հսկողություն իրականացնելու համար ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելը՝ անկախ գրավոր հայտարարագիր ներկայացնելուց՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ 50,000 դրամի չափով:

Նշված հոդվածի տառացի մեկնաբանությունից պարզ է, որ մաքսային մարմիններին ապրանքների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականության կատարումը կանխորոշված է որոշակի ժամկետներով: Այսինքն, հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձը համարվում է այդ պարտականությունը խախտած միայն սահմանված ժամկետները լրանալուց հետո: Հետևաբար, եթե անձը գործողությունը և/կամ անգործությունը սահմանված ժամկետների մեջ է, ապա բացակայում է զանցակազմի առկայությունը:

Հետևաբար, ՀՀ մաքսային օրենսգրքի 194-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի առկայությունը որոշելիս, վարչական մամինը պարտավոր էր հիմնավորել, որ այդ պահին առկա է սահմանված ժամկետների խախտում, և որ ամենակարևորն է, ինչ իրավական ակտով են սահմանված այդ ժամկետները:

Գործի իրական փաստական հանգամանքները հետևյալն են.

1. 01.04.2008 թ-ին թիվ C 2197 ԲՄՀ-ով «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի անվամբ ժամանակավոր ներմուծում մաքսային ընթացակարգով ՀՀ տարածք է ներմուծվել ապրանքներ ավելի քան 551 միլիոն դրամ մաքսային արժեքով:

2. ՀՀ կառավարության որոշումներով թվով երկու անգամ ժամանակավոր ներմուծման ժամկետները երկարացվել են և մեկ որոշում ընդունվել է հոգուտ ընկերության՝ հաշվի առնելով ծրագրի բացառիկությունը բնապահպանության և վերականգնվող էներգիայի արտադրության ոլորտում, ինչպես նաև տարածաշրջանում եզակի լինելը:

3. 10.10.2012 թ-ի թիվ 0000624 արձանագրությամբ նշված ապրանքները պատասխանատու պահպանության են հանձնվել մաքսային մարմիններին: Արձանագրությամբ պահպանության ժամկետներ չեն սահմանվել:

4. Պատասխանատու պահպանության հանձնված ապրանքների պահպանման համար օրենքով սահմանված վճարի գումարը դեռևս չի հավասարվել ապրանքի մաքսային արժեքին:

5. Մաքսային մարմնի կողմից միակողմանի պատասխանատու պահպանության ժամկետները դադարեցնելու մասին որևէ ծանուցում կամ այլ գրավոր փաստաթուղթ մաքսային մարմինների կողմից չի ուղարկվել:

Բողոքի իրավական հիմնավորումները.

Ապրանքները ներմուծվել են ՀՀ տարածք ներմուծման պահին գործող Մաքսային օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն, իսկ պատասխանատու պահպանության հանձնելուց հետո նույն հոդվածի 2-րդ մասի դ/ ենթակետի ուժով այդ ապրանքների հետագա արտահանման պարտավորությունը համարվել է չխախտված:

Այդ ժամանակ գործող մաքսային օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Մաքսային մարմինների պատասխանատու պահպանությանը հանձնված ապրանքների նկատմամբ ստանձնած ժամկետային պարտավորությունների կատարման ժամկետը պատասխանատու պահպանության ընթացքում համարվել է կասեցված:

Հիմք ընդունելով այդ ժամանակ գործող մաքսային օրենսգրքի 126-րդ հոդվածի իրավակարգավորումը կարելի է եզրակացնել, որ պատասխանատու պահպանության ժամկետը կարող է լրանալ, եթե այդպիսի ժամկետ սահմանված է պահպանության փաստաթղթերով, կամ եթե դրանց պահպանման համար օրենքով սահմանված վճարի գումարը հավասարվել է ապրանքի մաքսային արժեքին: Սակայն նշված դեպքերից որևէ մեկը տվյալ պարագայում առկա չէ: Հետևաբար, չի լրացել պատասխանատու պահպանության ժամկետը, ինչից բխում է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 194-րդ հոդվածով նախատեսված ժամկետները դեռևս կասեցված են և հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը բացակայում է:

Նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում նաև ԵՏՄ-ին ՀՀ-ի անդամակցության կապակցությամբ ՀՀ մաքսային օրենսդրությունում կատարված վերջին փոփոխությունները: Մասնավորապես, այդ կապակցությամբ ընդունված «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի, «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի անցումային դրույթները:

Համաձայն «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի անցումային դրույթների 259-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն ընդունված մաքսային օրենսդրությանը վերաբերող Հայաստանի Հանրապետության իրավական ակտերը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո շարունակում են գործել Միության մաքսային օրենսգրքով, Միության իրավանորմատիվային հիմքը կազմող այլ իրավական ակտերով, սույն օրենքով, ինչպես նաև Պայմանագրով սահմանված դրույթներին համապատասխանող և չհակասող մասով մինչև դրանց ուժը կորցրած ճանաչելը կամ ամբողջական համապատասխանեցումը Միության մաքսային օրենսդրությանը:

Համաձայն «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի անցումային դրույթների 366-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սույն Օրենսգրքի դրույթները տարածվում են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ կարգավորվող և այն ուժի մեջ մտնելու օրվանից առաջացող հարաբերությունների վրա:

Համաձայն պայմանագրի անցումային դրույթների 368-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի՝ Մաքսային վերահսկողության ներքո ժամանակավոր պահպանության տակ գտնվող ապրանքների նկատմամբ, սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ,

կիրառվում են սույն Օրենսգրքի 25-րդ գլխի դրույթները հաշվի առնելով սույն կետի երկրորդ մասը:

Ժամանակավոր պահպանության տակ գտնվող ապրանքների ժամանակավոր պահպանության ժամկետը, սույն Օրենսգրքին ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ, հաշվարկվում է այդ ապրանքները ժամանակավոր պահպանության հանձնելու օրվանից Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում իրականացվում է այդ պահպանությունը:

3. Սույն Օրենսգրքին ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ մաքսային վերահսկողության ներքո ժամանակավոր պահպանության տակ գտնվող ապրանքների համար ապրանքների մասին հայտարարագիրը պետք է ներկայացվի մաքսային մարմին մինչև ժամանակավոր պահպանության ժամկետի լրանալը, որը հաշվարկվում է այդ ապրանքները ժամանակավոր պահպանության հանձնելու ամսաթվից Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում իրականացվում է այդ պահպանությունը:

Նշված անցումային նորմերի համապարփակ մեկնաբանությունից ուղղակիորեն հետևում է, որ ժամանակավոր /պատասխանատու/ պահպանության հանձնված ապրանքների մասին հայտարարագիր ներկայացնելու ժամկետները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ: Նախկինում գործող օրենսգրքի ուժով այդ ժամկետները համարվել են կասեցված: Նոր օրենսդրությամբ այդ ժամկետները վերսկսված համարվելու մասին որևէ դրույթ նախատեսված չէ: Հետևաբար, այդ ժամկետները ինքնաբերաբար չեն կարող վերսկսվել: Եթե նույնիսկ մի պահ ընդունենք, որ նոր մաքսային օրենսդրությամբ պատասխանատու պահպանության ընթացակարգը վերացել է կամ ենթարկվել է էական փոփոխությունների, ապա նոր օրենսդրությունը ՀՀ Սահմանադրության 22-րդ և 42-րդ հոդվածների ուժով չի կարող ունենալ:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ անունով 01.04.2008 թ-ին թիվ C-2197 ՄՀ-ով «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով 304 օր ժամկետով ՀՀ տարածք են ներմուծվել 50625 կգ ընդհանուր քաշով սարքավորումներ: Այնուհետև, ՀՀ կառավարության 23.04.2009 թ-ի թիվ 447-Ա որոշմամբ վերոնշված ԲՄՀ-ի ժամկետը երկարաձգվել է մինչև 01.04.2012 թ-ը, իսկ 05.04.2012 թ-ի թիվ 387-Ա որոշմամբ՝ մինչև 01.10.2012 թ-ը:

10.10.2012 թ-ին կազմվել է թիվ 0000624 արձանագրությունը, որի համաձայն ժամանակավոր ներմուծում մաքսային ռեժիմով ՀՀ ներմուծված ապրանքները հանձնվել են մաքսային մարմինների պատասխանատու պահպանությանը:

Հարկ է նշել, որ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թ-ի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին պայմանագիրը հրապարակվել է 2014 թ-ի դեկտեմբերի 30-ի պաշտոնական տեղեկագրում և ուժի մեջ է մտել 2015 թ-ի հունվարի 2-ից: Նշված պայմանագրի 3-րդ հավելվածի 6-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում մաքսային հսկողության ներքո գտնվող և, մինչև Պայմանագիրն ուժի մեջ մտնելը, մաքսային մարմինների պատասխանատու պահպանության հանձնված ապրանքները Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից համարվում են ժամանակավոր պահպանության հանձնված ապրանքներ, և այդ ապրանքների նկատմամբ կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքի, Եվրասիական տնտեսական միության

իրավունքի մաս կազմող՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող այլ միջազգային պայմանագրերի և ուրիշ ակտերի դրույթները՝ հաշվի առնելով սույն Հավելվածի 7-րդ կետը:

Հավելվածի 7-րդ կետի համաձայն՝ սույն Հավելվածի 6-րդ կետում նշված ապրանքների ժամանակավոր պահպանության ժամկետը հաշվարկվում է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից: Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետությունում մաքսային հսկողության ներքո գտնվող և մաքսային մարմինների պատասխանատու պահպանության հանձնված ապրանքների վերաբերյալ մաքսային հայտարարագիրը պետք է ներկայացվի մաքսային մարմին մինչև Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշվարկվող՝ ժամանակավոր պահպանության ժամկետի ավարտը:

Քննարկվող դեպքում 10.10.2012 թ-ի թիվ 0000624 արձանագրությամբ ժամանակավոր պահպանության ներքո գտնվող ապրանքների պահպանման ժամկետն ավարտվել է 02.03.2015 թ-ին և ընկերության տնօրեն Ա.Մանուկյանը սահմանված ժամկետում չի ապահովել մաքսային հայտարարագրի ներկայացումը մաքսային մարմին: Փաստի առթիվ 05.03.15 թ-ին «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի տնօրենի նկատմամբ կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն: Արձանագրության մեկ օրինակը սահմանված կարգով ուղարկվել է ընկերության տնօրենին, իսկ մյուս օրինակը 09.03.2015 թ-ի թիվ 242 գրությամբ ուղարկվել է Միջազգային Ճանապարհային Փոխադրումների տարածաշրջանային մաքսատուն՝ հետագա ընթացքն ապահովելու համար:

«Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի տնօրեն Ա.Մանուկյանը թույլ է տվել 17.12.2014 թ-ի ՀՕ-241-Ն «Մաքսային կարգավորումների մասին» ՀՀ օրենքի 259-րդ հոդվածի 4-րդ կետի ուժով գործող 06.07.2000 թ-ի ՀՀ Մաքսային օրենսգրքի 194-րդ հոդվածով սահմանված մաքսային կանոնների խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ մաքսային օրենսգրքի 206-րդ և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 14-րդ, 32-րդ և 234-րդ հոդվածներով 20.03.2015 թ-ին ՀՀ ՖՆ Միջազգային տարածաշրջանային մաքսատան պետի կողմից կայացվել է վարչական տուգանք նշանակելու մասին թիվ 11 որոշումը, որով մաքսային կանոնների խախտում կատարելու համար ընկերության տնօրենը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 50.000 դրամի չափով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Միջազգային Ճանապարհային Փոխադրումների տարածաշրջանային մաքսատան պետի 20.03.2015 թ-ի թիվ 11 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ